ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 849-Ա

12 օգոստոսի 2025 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ «ԱՐԵՎԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱԼԻՆԱ ՄՈՒՐԱԴԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հյաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 130-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և Ալինա Մուրադի Ոսկանյանի միջև 2021 թվականի հոկտեմբերի 12-ին որոշակի ժամկետով կքնված աշխատանքային պայմանագրի 6.1-րդ կետի «գ » ենթակետը և հաշվի առնելով Ալինա Մուրադի Ոսկանյանի դիմումը՝

Որոշում եմ՝

1. 2025 թվականի օգոստոսի 18-ից լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Արևիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալինա Մուրադի Ոսկանյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Աշխատանքային վերջին օր համարել 2025 թվականի օգոստոսի 15-ը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Արևիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Արևիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակ Սուսան Հակոբի Հովհաննիսյանին:

4. Հայաստան Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 12
գյուղ Ախուրյան